

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
2015 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

2016

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2015 թվականին կատարված
աշխատանքների մասին**

Նախաբան

2015 թվականին ԼՂՀ-ում իրականացվող պետական ֆինանսատնտեսական քաղաքականությունը հիմնականում ուղղված էր մակրոտնտեսական կայունության, տնտեսական աճի բարձր տեմպերի, պետության ֆինանսական միջոցների հավաքագրման, բաշխման և վերաբաշխման գործընթացների արդյունավետության ապահովմանը:

2015 թվականի համախառն ներքին արդյունքը (այսուհետ՝ ՀՆԱ) կազմել է 209.3 մլրդ դրամ՝ ապահովելով իրական աճի տեմպ 9.1 տոկոսի չափով: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն կազմում է 1,414.3 հազ. դրամ՝ 2014 թվականի 1,268.1 հազ. դրամի դիմաց:

Ցուցանիշը	2011	2012	2013	2014	2015
Անվանական ՀՆԱ (մլն դրամ)	135,498.5	150,015.7	168,563.6	188,840.3	209,345.7
ՀՆԱ-ի իրական աճ (%)	9.1	9.9	9.3	8.9	9.1
ՀՆԱ 1 շնչի հաշվով (հազ. դրամ)	936.1	1,023.0	1,137.9	1,268.1	1,414.3
Արդյունաբերության իրական աճ (%)	100.8	99.2	110.0	117.2	102.5
Գյուղատնտեսության իրական աճ (%)	120.1	123.9	109.2	95.7	112.9
Շինարարության աճ/նվազում (%)	101.4	87.4	118.1	111.7	101.0
Պետական բյուջեի սեփական եկամուտներ (մլն դրամ)	25,756.4	28,755.6	27,919.3	31,485.4	34,436.4
այդ թվում՝ հարկային եկամուտներ	17,097.9	18,936.3	18,291.6	30,210.4	33,175.5
Պետական բյուջեի ծախսեր (մլն դրամ)	67,377.0	67,343.8	69,623.2	78,126.5	83,107.7

Հաշվետու տարվա պետական բյուջեի եկամուտները կազմել են 34,436.4 մլն դրամ, ընդ որում՝ հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 33,175.5 մլն դրամ՝ ապահովելով պլանային առաջադրանքի կատարումը 100.4 տոկոսով:

2015 թվականի պետական բյուջեն հաջողվել է կատարել առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի էական կուտակման: Պետական բյուջեով նախատեսված ծրագրերը հիմնականում իրականացվել են նախանշված ծավալներով՝ ապահովելով ակնկալվող արդյունքները: Հաշվետու տարվա պետական բյուջեի ծախսերը կազմել են 83,107.7 մլն դրամ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» ԼՂՀ օրենքում 2015թ. հունիսի 30-ին կատարված փոփոխությունների, ինչպես նաև ԼՂՀ կառավարության 2015թ. հուլիսի 3-ի N 450-Ն որոշման համաձայն՝ ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը վերակազմավորվել է ԼՂՀ ֆինանսների նախարարության՝ իր կազմում ընդգրկելով ԼՂՀ կառավարությանն առնթեր հարկային պետական ծառայությունը: Այդ կապակցությամբ մշակվել և ԼՂՀ կառավարության հաստատմանն է ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը վերանվանելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագիծը, որն ընդունվել է ԼՂՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 14-ի N 450-Ն որոշմամբ: Նախարարությանը վերապահվել են նաև «Հարկային ծառայության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով նախատեսված հարկային մարմնի լիազորությունները:

2015 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ նաև Նախարարություն) գործունեությունն ուղղված էր ԼՂՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրությամբ վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացմանը, ինչպես նաև ԼՂՀ կառավարության գործունեության և այլ աշխատանքային ծրագրերի կատարումն ապահովող միջոցառումների իրագործմանը: Նշված ուղղություններով կատարված աշխատանքները հիմնականում բնութագրվում են հետևյալ կերպ:

Բյուջետային քաղաքականություն

Հաշվետու ժամանակաշրջանում բյուջետային քաղաքականությունը նպատակաուղղված էր բնակչության սոցիալական հարցերի լուծմանը, կենսամակարդակի բարձրացմանը, պետական միջոցների նպատակային ծրագրավորման գործընթացի ապահովմանը:

«ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի և «ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ԼՂՀ կառավարության որոշման դրույթների համաձայն աշխատանքներ են իրականացվել պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների, բյուջետային հիմնարկների և կազմակերպությունների կողմից ներկայացված պահպանման ծախսերի նախահաշիվների, հաստիքացուցակների, տարիֆիկացիաների, ինչպես նաև առանձին ծառայություններից օգտվելու համար կնքված պայմանագրերի ստուգման ուղղությամբ:

Ընդունվել, ստուգվել և ընդհանրացվել են համայնքների ավագանիների կողմից հաստատված 2015 թվականի համայնքային բյուջեները՝ ըստ եռամսյակային համամասնությունների:

Ուսումնասիրվել, ստուգվել և համաձայնություն է տրվել պետական պատվերի և վճարովի ծառայությունների գծով կիրառվող նորմատիվների և միջինացված գների վերաբերյալ:

ԼՂՀ վարչապետի 2015 թվականի մայիսի 14-ի «ԼՂՀ 2016 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 168-Ա որոշմամբ հաստատված ժամանակացույցի համաձայն կազմակերպվել են ԼՂՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծերի մշակման և կազմման աշխատանքները: Մշակվել են ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացվող 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և ԼՂՀ 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման մեթոդական ցուցումները:

Վերոնշյալ որոշման պահանջների համաձայն կազմվել են նաև 2016 թվականի համայնքների բյուջեների նախագծերի մշակման և ԼՂՀ պետական բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և ներկայացման պարտադիր բնույթի մեթոդական ցուցումները և

խորհրդատվական բնույթ կրող ուղեցույցները, պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների կանխատեսումների կազմման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումները:

Ուսումնասիրվել և ընդհանրացվել են.

- պետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի և 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը,

- համայնքների կողմից ներկայացված ԼՂՀ պետական բյուջեից դոտացիա ստանալու 2016 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը: Հաշվարկվել են համայնքների բյուջեներին պետական բյուջեից հատկացվող դոտացիաների գումարները,

- ԼՂՀ պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված պետական տուրքերի և այլ եկամուտների գծով ԼՂՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով և ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարների մասին տեղեկությունները:

Մշակվել են «ԼՂՀ 2016-2018 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը», «ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը և նախագծի բացատրագիրը ու ներկայացվել ԼՂՀ կառավարության քննարկմանը: Մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում և պատգամավորական խմբակցություններում «ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի նախագծի քննարկումներին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջների համաձայն մշակվել է ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի ծախսերի տարեկան հատկացումների կատարման եռամսյակային (աճողական) համամասնությունները (ըստ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի ու դրանք իրականացնող մարմինների) հաստատող «ԼՂՀ 2016 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» որոշման նախագիծը, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2015թ. դեկտեմբերի 28-ին:

«ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» ԼՂՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի

ու «ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեի մասին» ԼՂՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն պատրաստվել են ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեում վերաբաշխումներ և փոփոխություններ կատարելու մասին ԼՂՀ կառավարության թվով 13 որոշումների նախագծեր:

Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է ԼՂՀ 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված ԼՂՀ կառավարության պահուստային ֆոնդից և այլ կենտրոնացված ֆոնդերից ԼՂՀ կառավարության որոշումներով իրականացվող հատկացումների, օրենսդրությամբ սահմանված կարգով բյուջետային միջոցների վերաբաշխումների հաշվառումը:

Մշակվել են պետական բյուջեի կազմման և կատարման հարցերին առնչվող ԼՂՀ օրենքների, ԼՂՀ Նախագահի հրամանագրի, ԼՂՀ կառավարության և վարչապետի որոշումների նախագծեր, ինչպես նաև նախարարություններից ու գերատեսչություններից ստացված համանման նախագծերի վերաբերյալ տրվել են համապատասխան առաջարկություններ:

50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների տրամադրության տակ մնացած շահույթի բաշխման նպատակով ուսումնասիրվել են պետական լիազորված մարմիններից ստացված առաջարկությունները և տրվել են համապատասխան եզրակացություններ գուտ շահույթի օգտագործման ուղղությամբ: 2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքով ստացված գուտ շահույթից պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի դիմաց վճարման ենթակա շահութաբաժինների չափերի վերաբերյալ պատրաստվել է ԼՂՀ կառավարության որոշման նախագիծ, որը ԼՂՀ կառավարության կողմից ընդունվել է 2015 թվականի հուլիսի 20-ին:

Ապահովվել են արտաբյուջետային մուտքերի համակարգման, հաշվառման և նախատեսված ծրագրերի իրականացմանը նպատակաուղղված ֆինանսավորման գործընթացները:

Մարդասիրական օգնության արտաբյուջետային հաշվից կատարվող ֆինանսական հոսքերի մասին պատրաստվել են ամենամյա հաշվետվություններ:

Մասնակցություն է ցուցաբերվել ԼՂՀ կառավարության կողմից համայնքների ղեկավարների ուսուցման նպատակով կազմակերպված դասընթացներին:

Մշակվել է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որի համաձայն որոշ պետական պաշտոններ համապատասխանեցվել են ԼՂՀ կառավարության կառուցվածքին: Նշված նախագիծը 2016 թվականի պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվել է ԼՂՀ Ազգային ժողովի քննարկմանը և ընդունվել է 2015 թվականի դեկտեմբերի 23-ին:

Գանձապետական համակարգ

2015 թվականին գանձապետական համակարգի ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության աշխատանքներն ուղղված են եղել ինչպես ԼՂՀ պետական բյուջեի համաչափ և սահուն կատարման ապահովմանը, այնպես էլ համակարգի զարգացման և կատարելագործման համար անհրաժեշտ գործառույթների իրականացմանը:

Ամբողջ ծավալով վճարվել են աշխատավարձի գծով նախատեսված միջոցները, կենսաթոշակները, նպաստները, ծնելիության և բազմազավակության խթանման միջոցառումների և այլ սոցիալական ծրագրերի իրականացման ծախսերը:

Տարվա ընթացքում գանձապետական համակարգը սպասարկել է 428 իրավաբանական անձանց (36 պետական կառավարման մարմին, 227 տեղական ինքնակառավարման մարմին, 153 պետական ոչ առևտրային կազմակերպություն, 11 փակ բաժնետիրական ընկերություն և 1 այլ հիմնարկ) 6790 գանձապետական հաշիվներով, որից 2048-ը՝ պետական բյուջեի, 4512-ը՝ համայնքային բյուջեների, 230-ը՝ արտաբյուջետային գործառնությունների իրականացման համար:

Հաշվետու ժամանակահատվածում Նախարարության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

➤ ընդունվել են ԼՂՀ նախարարությունների, գերատեսչությունների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացվող բյուջետային ծախսերի ֆինանսավորման հայտերը, ստուգվել, և ճշտության դեպքում իրականացվել է ֆինանսավորումը,

➤ պետական բյուջեի ծախսերի դրամարկղային կատարումն իրականացնելու նպատակով ապահովվել է առկա դրամարկղային միջոցների բաշխումը

կենտրոնական գանձապետարանից տեղական գանձապետական բաժիններին և վերահսկվել կատարումը վերջիններիս կողմից,

➤ պետական և համայնքային բյուջեների կատարման ընթացքում նախնական հսկողություն է իրականացվել բյուջետային հիմնարկների կողմից կատարվող վճարումների ճշտության և նպատակայնության նկատմամբ,

➤ պատրաստվել են ամենօրյա և ամենամսյա տեղեկություններ պետական բյուջեի եկամուտների, բյուջետային հիմնարկների, պետական ոչ առևտրային և հասարակական կազմակերպությունների ֆինանսավորման մասին,

➤ կազմվել է ամենամսյա տեղեկատվություն ԼՂՀ պետական բյուջեի կատարողականի մասին (գործառական և տնտեսագիտական դասակարգմամբ) և սահմանված ժամկետում ներկայացվել է ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն,

➤ հսկողություն է սահմանվել 50 տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունների կողմից տնտեսական գործունեության արդյունքում մնացորդային շահույթից շահութաբաժինները պետական բյուջե փոխանցելու նկատմամբ,

➤ նախարարություններից, գերատեսչություններից, բյուջետային այլ հիմնարկներից, տեղական գանձապետական բաժիններից և հասարակական կազմակերպություններից ընդունվել են պետական բյուջեի կատարման 2014 թվականի, 2015 թվականի առաջին եռամսյակի, առաջին կիսամյակի և 9 ամսվա հաշվետվությունները, որոնց հիման վրա կազմվել են ԼՂՀ պետական և համայնքային բյուջեների ամփոփ հաշվետվությունները, պատրաստվել են համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի «ԼՂՀ պետական բյուջեի կատարման մասին» ԼՂՀ կառավարության որոշման նախագծերը և սահմանված ժամկետներում ներկայացվել ԼՂՀ կառավարություն,

➤ մասնակցություն է ապահովվել ԼՂՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվության քննարկումներին,

➤ յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածից հետո ԼՂՀ պետական բյուջեի կատարման վերլուծության ամփոփ բնութագիրը ներկայացվել է մամուլում հրապարակման համար,

➤ անհրաժեշտության դեպքում նախարարությունների և գերատեսչությունների

գրությունների հիման վրա ճշտումներ են իրականացվել նախահաշիվների հոդվածներում: Տարվա ընթացքում մուտքագրվել է 238 գրություն՝ ծախսերի հոդվածային փոփոխություն կատարելու խնդրանքով, որոնցից բավարարվել է 217-ը,

➤ ԼՂՀ պետական կառավարման մարմինների 40 գրության հիման վրա նրանց կողմից օրենսդրությամբ սահմանված հիմքերով հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելու համար պետական բյուջեից իրականացվել են «Պետական տուրքի մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված վճարումները,

➤ կատարվել է քաղաքացիների ընդունելություն՝ հիմնականում նրանց կողմից պետական և համայնքային բյուջեներ իրավաբանական անձանց կողմից մատուցված ծառայությունների դիմաց սխալմամբ կամ ավել վճարված, ինչպես նաև ծառայությունների կատարումը մերժելու դեպքում վճարված պետական տուրքի գումարի վերադարձման հարցերով: Ընդունվել է 38 դիմում,

➤ 2015 թվականի դեկտեմբերի 22-ին հրավիրվել է խորհրդակցություն շրջանների գանձապետական բաժինների պետերի մասնակցությամբ, որտեղ քննարկվել են պետական և համայնքային բյուջեների կատարման հարցերը, ինչպես նաև մինչև տարեվերջ համայնքների բյուջեների սպասվելիք եկամուտները և ծախսերը:

Հարկային քաղաքականության

2015 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքի մասով բյուջե է մուտքագրվել 33,175.5 մլն դրամ, որը պլանավորված 33,050.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցել է 0.4 %-ով կամ 125.5 մլն դրամով:

Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը աճել են 9.8 %-ով կամ 2,965.1 մլն դրամով:

Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերը պլանային առաջադրանքների և նախորդ տարվա համեմատ ներկայացնում են հետևյալ պատկերը.

(մլն դրամ)

Եկամտատեսակը	Պլանային առաջադրանքը	2015թ. մուտքագրված գումարները	Հարաբերությունը մուտք/պլան (%)	Հարաբերությունը 2015/2014 (%)
Ա Ա Հ	12,714.6	11,144.6	87.6	94.0
Շահութահարկ	1,708.0	2,277.2	133.4	110.7
Եկամտային հարկ	14,009.0	14,767.8	105.2	121.8
Ակցիզային հարկ	180.0	181.4	100.8	108.7
Հաստատագրված վճար	570.4	617.6	108.3	106.4
Առևտրի հարկ	1,803.0	1,823.1	101.1	100.2
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	750.0	1,006.0	134.1	196.5
Ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, նորոգման և պահպանման համար կատարվող մասհանումներ	400.2	430.0	107.4	94.2
Այլ հարկային եկամուտներ	67.8	77.1	111.5	104.1
Ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման և օգտագործման պարտադիր վճարներ	267.5	267.7	100.1	-
Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար	149.5	151.8	101.6	120.2
Պետական տուրք	430.0	431.2	100.3	104.0
ԸՆԴԱՄԵՆԸ	33,050.0	33,175.5	100.4	109.8

Հսկողական գործընթացներ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները հաշվետու տարում կազմել են 104,040.2 մլն դրամ՝ նախորդ տարվա 106,215.0 մլն դրամի դիմաց: Նույն ժամանակահատվածում արտահանման ծավալները կազմել են 29,593.2 մլն դրամ՝ նախորդ տարվա 25,946.9 մլն դրամի դիմաց:

2015 թվականին հարկային մարմնի կողմից իրականացվել են պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 205 ստուգում: Նշված ստուգումներով հաշվարկված պարտավորությունները կազմել են 977.6 մլն դրամ, որից 82 տոկոսը բաժին է ընկնում խոշոր հարկ վճարողների մոտ իրականացված ստուգումներով հայտնաբերված գումարներին: Հաշվետու տարում կատարված ստուգումներով բյուջե մուտքագրված գումարները կազմել են 808.7 մլն դրամ՝ նախորդ տարվա 801.6 մլն դրամի դիմաց, իսկ ընթացիկ և նախորդ տարիներին կատարված բոլոր ստուգումների մասով բյուջե է մուտքագրվել 1,528.4 մլն դրամ՝ նախորդ տարվա 1,114.3 մլն դրամի դիմաց:

Տարվա ընթացքում կատարվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ճշտության 17, էլեկտտային տվյալների և ուղղիչ գործակիցների ճշտության 4 ստուգումներ, հայտնաբերվել առանց աշխատանքային պայմանագիր կնքելու վարձու աշխատանք օգտագործելու 28, ապօրինի գործունեության իրականացման 6, առաքվող, տրամադրվող, տեղափոխվող կամ վաճառվող արտադրանքի, ապրանքների ու դրանց գների գրանցման անհամապատասխանության 10, պատրաստի արտադրանքի, ապրանքների մնացորդի պակասորդի հայտնաբերման 10 դեպքեր:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 8475 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 965 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ, որոնցից 497 խախտման մասով հարկատուների կողմից կատարվել են ճշգրտումներ՝ գերծ մնալով հետագա ստուգումներով առաջադրվելիք լրացուցիչ պարտավորություններից:

Հարկ վճարողների իրացման իրական ծավալների վերհանման նպատակով հացի արտադրության ոլորտում գործող 42 հարկ վճարողների մոտ 2015 թվականի տարբեր հաշվետու ժամանակահատվածներում իրականացվել են թվով 86 արտադրանքի արտադրության և իրացման փաստացի գների (սակագների) (այդ թվում՝ միջին) չափագրումներ, որոնց արդյունքում 24 հարկ վճարողների մոտ հայտնաբերվել են իրացման ծավալների էական թերհայտարարագրումներ և առաջարկվել է արտացոլել իրական ծավալները:

Աշխատանքներ են տարվել նաև հարկային հանցագործությունների կանխման, հակաիրավական գործունեություն իրականացնող անձանց պատասխանատվության ենթարկման և պետությանը պատճառված վնասների վերականգնման ուղղությամբ: ԼՂՀ Քրեական օրենսգրքին համապատասխան կանխամտածված սնանկության փաստի առթիվ հարուցված 2 քրեական գործով վերականգնվել է 28 մլն դրամ գումարի չափով պետությանը պատճառված վնասը:

2015 թվականի ընթացքում կայացվել է վարչական տույժ նշանակելու մասին թվով 1220 որոշում՝ 17.9 մլն դրամ ընդհանուր գումարով, որից գանձվել է 16.3 մլն դրամը կամ առաջադրվածի 91 %-ը:

Զգալի աշխատանքներ են տարվել նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների նվազեցման ուղղությամբ՝ պարբերաբար ներկայացվել

ծանուցումներ, իրականացվել վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվել արգելադրումներ, ներկայացվել դատական հայցեր:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարան է ներկայացվել թվով 100 հայց՝ 322.7 մլն դրամ հայցապահանջի գումարով: Ներկայացված հայցերի մասով (այդ թվում՝ նախորդ տարիների մասով) դատական մարմինների կողմից հաշվետու տարում կայացվել է 77 վճիռ՝ 298.0 մլն դրամ ընդհանուր գումարով, ընդ որում՝ 281.3 մլն դրամը կամ 94.4 տոկոսը բավարարվել է, 4.7 մլն դրամը՝ մարվել դատական գործընթացում, 8.2 մլն դրամը՝ մերժվել մասնակիորեն, 3.8 մլն դրամը՝ կարճվել, իսկ 125.2 մլն դրամ գումարով հայցապահանջները դեռևս գտնվում են դատական վարույթում: Դատարան է ներկայացվել նաև պարտապան հարկ վճարողին սնանկ ճանաչելու վերաբերյալ 1 հայցադիմում՝ 31.7 մլն դրամ պարտավորության գումարով, որի վերաբերյալ կայացվել է սնանկ ճանաչելու վճիռ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների համար դատարան է ներկայացվել թվով 19 հայցադիմում՝ ընդհանուր 680.0 հազ. դրամի չափով վճարման կարգադրություն արձակելու մասին, որոնք ամբողջությամբ բավարարվել են դատարանի կողմից:

Օրենսդրական և ենթաօրենսդրական դրույթների կատարելագործում

2015 թվականի ընթացքում հարկային քաղաքականության ոլորտում նախաձեռնվել են 11 օրենքների, կառավարության 10 որոշումների նախագծեր, ընդունվել 6 գերատեսչական նորմատիվ ակտեր:

Օրենսդրական փոփոխությունները, որոնք կիրառության մեջ են դրվել 2016 թվականի հունվարի 1-ից, միտված են հանրապետության գործարար միջավայրի բարելավմանը, հարկային վարչարարության մեղմացմանն ու առկա տնտեսական պայմաններին ներդաշնակեցմանը: Մասնավորապես, ժամկետային արտոնություններ են սահմանվել գործունեությունը նոր սկսող հարկ վճարողների համար, ավելացված արժեքի հարկից ազատման արտոնություն սահմանվել փաստաբանական և զբոսաշրջային գործունեության մասով, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց շահութահարկի դրույքաչափը նվազեցվել և սահմանվել է 10 տոկոսի չափով, նվազեցվել են նաև հարկային օրենսդրությամբ սահմանված տուգանքների չափերը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարի վճարումներն ուշացնելու

համար տույժերի դրույքաչափը միասնականացվել է այլ վճարների համար սահմանված դրույքաչափերին:

Հանրային իրազեկման աշխատանքներ

Օրենսդրական կատարելագործմանը զուգընթաց զգալի աշխատանքներ են տարվել հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման, հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ: Մասնավորապես, հարկային օրենսդրության ճիշտ ընկալման և կիրառման նպատակով հարկ վճարողների հետ հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են թվով 12 սեմինար-խորհրդակցություններ: Ոլորտային խնդիրների քննարկման նպատակով խորհրդակցություններ են կազմակերպվել նաև խոշոր հարկ վճարողների, արտադրության, մեծածախ և մանրածախ առևտրի ոլորտներում գործող, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող հարկ վճարողների հետ, Եվրասիական Տնտեսական Միության անդամ երկրներ ապրանքներ արտահանող և այդ երկրներից ներմուծում կատարող ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների հետ:

Տարվա ընթացքում պարզաբանումներ են տրվել 61 հարկ վճարողների գրավոր հարցադրումներին, այդ թվում՝ 20-ը՝ ստացվել և պատասխան է տրվել հարկային մարմնի կայքէջի առցանց ռեժիմով: Կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից տեղերում կազմակերպվել է 2956 ընդունելություն, որոնց ընթացքում տրվել են պարզաբանումներ և ցուցումներ հարկ վճարողների բարձրացված հարցերի շուրջ:

Պարբերաբար իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական կայքէջի միջոցով. տեղեկատվություն է տրամադրվել հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների, հարկ վճարողների գործունեության կասեցումների, օպերատիվ հետախուզական բացահայտումների և համակարգում կազմակերպվող մրցույթների վերաբերյալ, տրվել են իրազեկման, նախազուշական, քարոզչական բնույթի հայտարարություններ, հրապարակվել ամսական վիճակագրական տեղեկություններ:

Հարկ վճարողների կողմից առավել հաճախակի բարձրացվող հարցերի հիման վրա հրատարակվել է «Պարզաբանումներ հարցերի և պատասխանների

տեսքով» գրքույկը: Հրատարակվել է նաև «Հարկեր, տուրքեր և վճարներ» ամփոփ ժողովածուն:

Տարվա ընթացքում թվով 1581 գործատուների հետ կնքվել են հաշվետվություններն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու վերաբերյալ պայմանագրեր և տրվել օգտվողի անուն ու գաղտնաբառ՝ վերջիններիս ներկայացնելով էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունները:

Համակարգի արդիականացում

Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացմանն ուղղված կարևորագույն քայլերից մեկը ժամանակակից սպասարկման պայմանների ապահովումն է: Այդ նպատակով շարունակվել են հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների շենքային պայմանների բարելավման աշխատանքները, մասնավորապես վերակառուցվել և վերազինվել է Ասկերանի շրջանի հարկային տեսչության շենքը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում շարունակվել են աշխատանքները միասնական էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման ուղղությամբ. ծրագրային նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել 2016 թվականի հունվարի 1-ից հարկային հաշվարկների՝ էլեկտրոնային եղանակով ընդունումն ապահովելու նպատակով: ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ մշակվել և ներդրվել է լիցենզավորված բանկերում հարկային մարմնում հաշվառված հարկ վճարողների համար հաշիվների բացման, ինչպես նաև փակման դեպքերում հարկային մարմնին էլեկտրոնային եղանակով տեղեկատվության տրամադրման ծրագիրը:

Հետամուտ լինելով կադրերի մասնագիտական պատրաստվածության բարձրացմանը՝ հաշվետու տարում հարկ վճարողների սպասարկման և վերահսկողական գործառույթներ իրականացնող թվով 149 աշխատակիցների հետ անց են կացվել ուսուցողական դասընթացներ՝ հաշվապահական հաշվառման, սպասարկման, վերահսկողության, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և մի շարք այլ թեմաներով: Հարկային մարմնի 2 աշխատակից, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից ստացած հրավերների շրջանակում, մասնակցել են հարկային մարմինների ներեվրոպական

կազմակերպության (IOTA) կողմից կազմակերպված միջազգային ուսումնական դասընթացներին, իսկ 17 աշխատակիցներ մասնակցել են ՀՀ ֆինանսների նախարարության ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

Սերտ համագործակցություն է տարվել Հայաստանի Հանրապետության հարկային մարմնի հետ. 2015 թվականի օգոստոս ամսում ՀՀ և ԼՂՀ ֆինանսների նախարարությունների միջև հաստատվել է 2015-2017 թվականների համագործակցության միջոցառումների (հարկային ոլորտի մասով) ծրագիրը: Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպվել են փոխադարձ այցելություններ, կատարվել անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և այլ տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

Ֆինանսական վերահսկողություն

Ֆինանսական վերահսկողության շրջանակներում հաշվետու տարվա ընթացքում լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 167 իրավաբանական անձանց՝ տնտեսվարող սուբյեկտների և բյուջետային հիմնարկությունների մոտ, այդ թվում՝ 21 բյուջետային հիմնարկներում, 66 պետական ոչ առևտրային կազմակերպություններում, 23 հիսուն տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերություններում, 1 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում, 28 հասարակական կազմակերպություններում, 4 քաղաքային և 24 գյուղական համայնքներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել է 45,212.6 հազ. դրամի անօրեն ծախսեր, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներ և ավելցուկներ, այդ թվում՝

- բյուջե պակաս հաշվարկված գումարներ՝ 28.6 հազ. դրամ,

- անօրինական դուրս գրումներ, վճարումներ և ծախսեր՝ 4,964.1 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 4,620.5 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 315.6 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 28.0 հազ. դրամ,

- փաստաթղթերով չհիմնավորված ծախսեր՝ 253.2 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 123.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 130.0 հազ. դրամ,

- նախահաշիվներով ավել նախատեսված գումարներ՝ 1,853.2 հազ. դրամ, որը

ենթակա է վերականգնման բյուջե,

- ոչ նպատակային, անարդյունավետ ծախսեր՝ 4.5 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման բյուջե,

- աշխատանքների և ծառայությունների հավելագրումներ՝ 14,744.6 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 14,709.4 հազ. դրամ և ձեռնարկության հաշվին՝ 35.2 հազ. դրամ,

- նորմերի խախտումներ՝ 10,056.3 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 9,936.1 հազ. դրամ և ձեռնարկության հաշվին՝ 120.2 հազ. դրամ,

- գերածախս՝ 417.6 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 334.6 հազ. դրամ և ձեռնարկության հաշվին՝ 83.0 հազ. դրամ,

- այլ խախտումներով արձանագրված գումարներ՝ 7,310.0 հազ. դրամ, որից ենթակա է վերականգնման բյուջե՝ 6,630.0 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 80.0 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման՝ 600.0 հազ. դրամ,

- ավելցուկ՝ 5,134.0 հազ. դրամ,

- պակասորդ՝ 446.5 հազ. դրամ:

Նշված գումարներից պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 33,587.8 հազ. դրամ, համայնքային բյուջե հաշվարկված գումարները՝ 4,652.3 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 764.0 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 628.0 հազ. դրամ:

Ավելցուկը կազմել է 5,134.0 հազ. դրամ, որից՝ 7 պետական ոչ առևտրային կազմակերպությունում՝ 1,227.6 հազ. դրամ, 3 հիսուն տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերություններում՝ 1,945.9 հազ. դրամ, 4 գյուղական համայնքներում՝ 1,960.5 հազ. դրամ:

Ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդները կազմել են 446.5 հազ. դրամ՝ որից՝ 3 պետական ոչ առևտրային կազմակերպություններում 14.4 հազ. դրամ, 1 հիսուն տոկոսից ավելի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսեր ունեցող բաժնետիրական ընկերությունում՝ 180.7 հազ. դրամ, 1 գյուղական համայնքում՝ 14.2 հազ. դրամ և 1 հասարակական կազմակերպությունում՝ 237.2 հազ. դրամ:

Լրացուցիչ հաշվարկված 45,212.6 հազ. դրամի անօրինական ծախսերից,

ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդներից ու ավելցուկներից վերականգնվել/վերաձևակերպվել է 33,858.5 հազ. դրամ, որից՝ պետական բյուջե՝ 26,691.7 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 1,496.5 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 346.4 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 4,877.4 հազ. դրամ, պակասորդ՝ 446.5 հազ. դրամ:

Ապառքի գումարները կազմում են 11,354.1 հազ. դրամ, որից՝ պետական բյուջեին՝ 6,896.1 հազ. դրամ, համայնքային բյուջեին՝ 3,155.8 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 417.6 հազ. դրամ, հաշվառումով վերաձևակերպվել է 884.6 հազ. դրամ:

Պետական բյուջե չվերականգնված գումարները հիմնականում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության, Ստեփանակերտի քաղաքային համայնքի, «Արցախուղի» ՓԲԸ-ի, «Քաշաթաղի ջրամատակարարում» ՓԲԸ-ի և IV-րդ եռամսյակի վերջում ստուգմամբ հայտնաբերված գումարների ապառքներն են:

Նախորդ՝ 2014թ. կատարված ստուգումների արդյունքներով լրացուցիչ հաշվարկված գումարների գծով ապառքներից 2015թ. վերականգնվել/վերաձևակերպվել է 14,511.8 հազ. դրամ, որից պետական բյուջե՝ 9,471.9 հազ. դրամ, համայնքային բյուջե՝ 4,137.2 հազ. դրամ, ձեռնարկության հաշվին՝ 902.7 հազ. դրամ:

Ընդամենը 2015թ. պետական բյուջե է վերականգնվել 36,163.6 հազ. դրամ, որից՝ 2015թ. արդյունքներով՝ 26,691.7 հազ. դրամ, 2014թ. ապառքի գումարներից՝ 9,471.9 հազ. դրամ: Համայնքային բյուջե է վերականգնվել 5,633.7 հազ. դրամ, որից՝ 2015թ. արդյունքներով՝ 1,496.5 հազ. դրամ, 2014թ. ապառքի գումարներից՝ 4,137.2 հազ. դրամ: Ձեռնարկության հաշվին է վերականգնվել 1,249.1 հազ. դրամ, որից՝ 2015թ. արդյունքներով 346.4 հազ. դրամ, 2014թ. ապառքի գումարներից 902.7 հազ. դրամ: 2015թ. արդյունքներով հաշվառումով վերաձևակերպված գումարները կազմել են 4,877.4 հազ. դրամ: 2015թ. արդյունքներով պակասորդից վերականգնվել է 446.5 հազ. դրամ:

Ստուգման արդյունքներով 4 հիմնարկ-ձեռնարկության նյութերը ներկայացվել են ԼՂՀ կառավարությանն առընթեր ԼՂՀ ոստիկանություն, 1-ը՝ ԼՂՀ դատախազություն:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորում

Հաշվապահական հաշվառման և աուդիտի կարգավորման ու

մեթոդաբանության ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2015 թվականին կատարված աշխատանքները հիմնականում ուղղված են եղել հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման նախապատրաստական աշխատանքների կազմակերպմանը, հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող իրավական դաշտի կատարելագործմանը, հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական օժանդակության ցուցաբերմանը, հաշվապահների և աուդիտորների որակավորման քննությունների անցկացմանը:

Հաշվետու տարում մշակվել և ընդունման են ներկայացվել հաշվապահական հաշվառումը և աուդիտորական գործունեությունը կարգավորող մի շարք օրենսդրական ակտերի նախագծեր, մասնավորապես՝

- «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքը, որը հանրային հատվածի հաշվապահական հաշվառման համակարգի ներդրման իրավական հիմքն է կազմում.

- «Աուդիտորական գործունեության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը, որով մեղմացվել են աուդիտորական կազմակերպությունների նկատմամբ գործող պահանջները:

Ընդունվել են նաև մի շարք գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր, մասնավորապես.

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2015թ. փետրվարի 16-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարության 2008թ. մարտի 27-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվապահների որակավորման քննությունների հարցերի (թեստերի) ցանկը (հարցաշարը), ծրագիրը, որի շրջանակներում կազմվելու են հարցաթերթիկում ներառվող խնդիրները, քննությունների ընթացքում օգտվելու համար թույլատրվող նորմատիվ իրավական ակտերի ցանկը հաստատելու մասին» թիվ 42 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 17-Ն հրամանը, որով հաշվապահների որակավորման քննության հարցաշարը համապատասխանեցվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությանը.

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2015թ. փետրվարի 16-ի «ԼՂՀ ֆինանսների նախարարության 2008թ. մայիսի 21-ի «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետությունում աուդիտորների որակավորման քննությունների հարցերը (թեստերը) և տիպային խնդիրները հաստատելու մասին» թիվ 74 հրամանում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 18-Ն հրամանը, որով աուդիտորների որակավորման քննության հարցաշարը համապատասխանեցվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գործող օրենսդրությանը.

- ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2015թ. ապրիլի 9-ի «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 28-րդ հոդվածով սահմանված գրանցումների վարման համակարգչային ծրագրերին ներկայացվող չափանիշները սահմանելու մասին» N 43-Ն հրամանը:

Աշխատանքներ են տարվել նաև «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքից բխող հիմնական ենթաօրենսդրական ակտերի նախագծերի մշակման ուղղությամբ:

2015 թվականին կազմակերպված հաշվապահների որակավորման 2 քննության արդյունքներով որակավորվել է 4 հաշվապահ, իսկ աուդիտորների որակավորման 1 քննության արդյունքներով՝ 1 աուդիտոր:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ որակավորված հաշվապահների թիվը կազմել է 34 հաշվապահ, իսկ որակավորված աուդիտորներինը՝ 12 աուդիտոր:

«Հաշվապահական հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի համաձայն 2014թ. հաշվետու տարվա գործունեության արդյունքներով խոշոր կազմակերպությունների ցանկը ճշտվել և տեղադրվել է Նախարարության ինտերնետային կայքում: Ցանկում ներառված 55 կազմակերպություններից 43-ը (78%) ենթարկվել են աուդիտի:

Ամփոփվել են աուդիտ իրականացնող անձանց կողմից ԼՂՀ ֆինանսների նախարարություն ներկայացված եռամսյակային հաշվետվությունները, որոնց համաձայն 2015թ. ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից իրականացվել է 40 պարտադիր և 2 կամավոր աուդիտ: 2015թ. հաշվետու տարվա ընթացքում աուդիտ իրականացնող անձանց կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց մատուցվել են նաև օրենքով չարգելված այլ ծառայություններ:

Տարվա ընթացքում իրականացվել են հաշվապահական հաշվառման ոլորտում մեթոդական և խորհրդատվական աշխատանքներ: Մասնավորապես, սեմինար-խորհրդակցություններ են կազմակերպվել լիազոր մարմինների, ԼՂՀ առողջապահության նախարարության և առողջապահության ոլորտի

կազմակերպությունների, «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների և «Շրջանի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ԼՂՀ Հաղորդի շրջանում գրանցված պետական կառավարչական հիմնարկների, բյուջետային հիմնարկների, ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների, ԼՂՀ Մարտունու շրջանում գրանցված ՊՈԱԿ-ների հաշվապահների համար:

2015 թվականի ընթացքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարությունը շարունակել է կատարվող օրենսդրական փոփոխություններին հասարակության իրազեկման աշխատանքները՝ մամուլում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում պարբերաբար հրապարակվող պարզաբանումների տեսքով: Մասնավորապես, տարվա ընթացքում մամուլում տպագրվել են հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հիմնական առանձնահատկությունները մեկնաբանող և հանրային հատվածի կազմակերպություններում հաշվապահական հաշվառման նոր համակարգի ներդրման գործընթացը նկարագրող նյութերը, իսկ նախարարության պաշտոնական կայքում՝ հիմնական միջոցների հաշվապահական հաշվառման հիմնական առանձնահատկությունները մեկնաբանող նյութը, «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ԼՂՀ օրենքում 2016 թվականից նախատեսվող փոփոխությունների մեկնաբանությունը և 2016թ. հունվարի 1-ից հետո ծագած անաշխատունակության դեպքերում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման համար միջին ամսական աշխատավարձի չափի որոշման վերաբերյալ պարզաբանումներ՝ օրինակներով:

Գնումների գործընթացի կարգավորում

2015 թվականի ընթացքում գնումների գործընթացի կարգավորման ոլորտում ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից.

- ստուգվել, հաշվառվել և ծանուցում է տրվել մոտ 850 գնման հաշվետվությունների,

- ուսումնասիրվել և հաշվառվել են պետության կարիքների համար 2015 թվականին իրականացվող գնումների պլանում փոփոխություն կատարելու

վերաբերյալ պետական մարմինների կողմից ներկայացված թվով 211 առաջարկություններ, ինչպես նաև կնքված պայմանագրերում փոփոխություն կատարելու վերաբերյալ թվով 24 գրություններ,

- գնումների ընթացակարգերի կազմակերպման շրջանակներում պետական մարմինների կողմից ներկայացված հարցադրումների վերաբերյալ տրվել են առաջարկություններ և մեթոդական ցուցումներ,

- պատրաստվել են գնումների էլեկտրոնային պաշտոնական տեղեկագրում հրապարակման ենթակա նյութեր՝ բաց ընթացակարգով գնում կատարելու թվով 70 հայտարարություններ և հրավերներ, պարզեցված ընթացակարգով գնում կատարելու թվով 88 հայտարարություններ և հրավերներ, թվով 44 նախատրակավորման հայտարարություններ, շրջանակային համաձայնագրեր կնքված մասնակիցների վերաբերյալ թվով 29 տեղեկություններ,

- ստուգվել և ամփոփվել են 2014 թվականի տարեկան հաշվետվություններն ու պետական կառավարման մարմինների և ենթակա կազմակերպությունների կողմից ներկայացված 2015 թվականի գնումների պլանները:

Տարվա ընթացքում «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից կնքվել է 21 շրջանակային համաձայնագիր: Ընդհանուր առմամբ կնքված շրջանակային համաձայնագրերի թիվը տարեվերջի դրությամբ կազմել է 191, իսկ մեկ ընթացակարգի հաշվով՝ 11:

«Գնումների մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման, գնման առարկայի բնութագրերի ստուգման և մասնակիցներին ներկայացվող որակավորման պահանջներում խտրականության բացառման պայմանների պահպանման նպատակով «Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից ուսումնասիրվել է գնումների էլեկտրոնային տեղեկատվում հրապարակված 619 հրավեր և հայտարարություն, որոնցից 16-ում կամ 2.6%-ում հայտնաբերվել են անհամապատասխանություններ: Անհամապատասխանությունների շտկման նպատակով տեղեկացվել են համապատասխան պատվիրատուները:

Գնումների բողոքարկման խորհրդի կողմից 2015 թվականի ընթացքում ստացվել է մեկ բողոք, որի քննությունից հետո այն բավարարվել է:

2015 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության հետ համագործակցության շրջանակներում Նախարարության ներկայացուցիչները մասնակցել են TAIEX

կազմակերպության և ՀՀ ֆինանսների նախարարության համատեղ կազմակերպած «Տեխնիկական օժանդակություն էլեկտրոնային գնումների համակարգում» դասընթացին:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի ընթացքում պետական կառավարման մարմինների կողմից կատարված գնումների ծավալը (բացառությամբ գնումների բազային միավորը չգերազանցող, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ պայմանավորված և պետական գաղտնիք պարունակող գնումների) կազմել է 11,958.4 մլն դրամ, որից 6,732.5 մլն դրամը (56.3 տոկոսը) մրցակցային հիմունքներով կատարված գնումներն են: Մրցակցային հիմունքներով կատարված գնումների իրականացումն ապահովել է հատկացված միջոցների տնտեսում 183.1 մլն դրամի կամ հատկացված գումարի 2.6 տոկոսի չափով:

Ֆինանսական շուկայի զարգացում

ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից ամփոփվել են **ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության ապահովագրության** (ԱՊՊԱ) համակարգի գործունեության 2015 թվականի արդյունքները: Հաշվետու տարում ԼՂՀ տարածքում ԱՊՊԱ ոլորտում գործունեություն են ծավալել Հայաստանի Հանրապետության 6 ապահովագրական ընկերություններ՝ իրավաբանական և ֆիզիկական անձ հանդիսացող 23 գործակալների միջոցով: 2015 թվականին ապահովագրվել է 10,458 ավտոմեքենա: Այդ ընթացքում 783 ճանապարհատրանսպորտային պատահարի կապակցությամբ իրականացվել է 116.6 մլն դրամի չափով գույքային և անձնական վնասների հատուցում:

Հարկատուների կողմից էլեկտրոնային եղանակով եկամտային հարկի հաշվետվությունների ներկայացումն ապահովելու համար շարունակվել են աշխատանքները՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 7-ի «Հարկային գործակալ չհանդիսացող անհատ ձեռնարկատերերի կողմից տարեկան եկամուտների մասին հաշվարկը էլեկտրոնային եղանակով ներկայացնելն ապահովող միջոցառումների մասին» N 728-Ա որոշմամբ սահմանված պահանջների իրականացմանը: Որոշման համաձայն էլեկտրոնային ստորագրություն պարունակող նույնականացման քարտի ստացման պետական տուրքի գումարները, ինչպես նաև էլեկտրոնային ստորագրության մեկ

տարվա սպասարկման վարձավճարը հարկային գործակալ չհանդիսացող անհատ ձեռնարկատերերի փոխարեն վճարվել են պետական բյուջեից:

ԼՂՀ բնակարանային ֆոնդի արդիականացման, բնակարանային շինարարության խթանման, ինչպես նաև հիփոթեքային վարկերի մատչելիության և հասանելիության բարձրացման նպատակների իրագործման քաղաքականությունից ելնելով՝ Նախարարության կողմից մշակվել է «Եկամտային հարկի մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, որն ընդունվել է 2015 թվականի մարտի 25-ին:

Համաձայն վերոնշյալ օրենքի՝ ԼՂՀ տարածքում բնակարան ձեռք բերող կամ անհատական բնակելի տուն կառուցող քաղաքացիների աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից պետական բյուջե վճարված եկամտային հարկը հետ է վերադարձվում հիփոթեքային վարկի շրջանակներում վճարված տոկոսների չափով:

Վերը նշված դրույթների պահանջների կատարումն ապահովելու նպատակով Նախարարության կողմից մշակվել են հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման ու կառուցված և կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի վերաբերյալ հարկային մարմին տեղեկություններ տրամադրելու կարգերը, որոնք հաստատվել են ԼՂՀ կառավարության 2015 թվականի մայիսի 26-ի N 306-Ն և N 307-Ն որոշումներով:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 147 վարձու աշխատողի՝ 36 մլն դրամի չափով:

Լիցենզավորում

«Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի և ԼՂՀ կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 128 որոշման համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից

իրականացվում է «Աուդիտորական ծառայությունների իրականացում», «Վիճակախաղերի կազմակերպում», «Շահումով խաղերի կազմակերպում», «Խաղատների կազմակերպում» գործունեության տեսակների, ինչպես նաև պարզ ընթացակարգով լիցենզավորում:

Լիցենզավորման աշխատանքների շրջանակներում 2015 թվականի ընթացքում Նախարարության կողմից՝

- տրամադրվել է ոգելից խմիչքների արտադրության 4 լիցենզիա.

- միջոցներ են ձեռնարկվել պետական տուրքը ժամանակին գանձելու համար՝ հաշվետու տարվա ընթացքում հավաքագրվել է մոտ 13.2 մլն դրամ պետական տուրք.

- ամսական և եռամսյակային տեղեկություններ են տրամադրվել ԼՂՀ արդարադատության նախարարությանը, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայությանը՝ տրամադրված, կասեցված, դադարեցված լիցենզիաների վերաբերյալ.

- «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքով նախատեսված լիցենզավորող մարմիններից եռամսյակային կտրվածքով հավաքագրվել են տեղեկություններ լիցենզիաների տրման, գործողության երկարաձգման, վերաձևակերպման, գործունեության իրականացման վայրի փոփոխության, գործողության դադարեցման վերաբերյալ, ստացված նյութերն ամփոփվել են և ընդգրկվել տվյալների բազա.

- վիճակախաղի կազմակերպման գործունեության բնագավառում հավաքագրվել են խաղարկությունով և ոչ խաղարկությունով վիճակախաղերի վերաբերյալ հաշվետվություններ, որոնց արդյունքներն ստուգվել և ամփոփվել են:

ԼՂՀ ֆինանսների նախարարության խաղային գործունեության կարգավորման ոլորտի պատասխանատու աշխատակիցն ընդգրկվել է Արցախի ազգային վիճակախաղի կազմակերպման հանձնաժողովի կազմում և մասնակցել 28.12.2015թ. կայացած վիճակախաղի հերթական խաղարկությանը: «ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԽԱՂ» ՓԲԸ կողմից ներկայացված տեղեկություններով թողարկվել է 140 000 տոմս, որից վաճառվել է 94,419 տոմս, իսկ 45,581 տոմս մարվել է «Վիճակախաղերի մասին» ԼՂՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն ստեղծված Արցախի ազգային վիճակախաղի չիրացված տոմսերի հաշվառման, մարման ու պահպանման հանձնաժողովի կողմից: Ընդհանուր առմամբ, շահել է 537 տոմս, շահումային ֆոնդը կազմել է մոտ 106.0 մլն ՀՀ դրամ:

Հաշվետու տարվա վերջի դրությամբ ուժի մեջ է աուդիտորական

ծառայությունների իրականացման 2, վիճակախաղերի կազմակերպման 1 և պարզ ընթացակարգով տրված 25 լիցենզիա:

Տնտեսական քաղաքականություն

ԼՂՀ տնտեսական քաղաքականության արդյունավետության բարձրացման, գործարար միջավայրի բարելավման, պետություն-մասնավոր հատված համագործակցության խորացման, ինչպես նաև սպառողների շահերի պաշտպանության բարձրացման նպատակով Նախարարության կողմից մշակվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացմանն ուղղված 2015 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող միջոցառումների ծրագիրը, որը հաստատվել է ԼՂՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 12-ի N 47-Ս որոշմամբ:

Վերոնշյալ որոշմամբ սահմանված են հետևյալ միջոցառումները, դրանց նպատակները, իրագործման մեխանիզմները և ֆինանսավորման աղբյուրները՝

- տնտեսական համաժողովների և ցուցահանդեսների կազմակերպմանն աջակցություն,
- պետական աջակցություն «Արցախի գործարարների (գործատուների) միություն» իրավաբանական անձանց միությանը,
- սննդամթերքի փորձարկման լաբորատորիայի տեխնիկական վերազինմանն աջակցություն,
- տնտեսական վերլուծությունների, հետազոտությունների իրականացման ծառայությունների ձեռքբերում,
- ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների արտադրանքի վերաբերյալ տեղեկություններ պարունակող ինտերնետային կայքի շահագործում և կայքի վերաբերյալ տեղեկությունների տարածում,
- ԼՂՀ տնտեսավարող սուբյեկտների արտադրանքի արտահանմանն աջակցություն:

ԼՂՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 30-ի N 853-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան Նախարարության կողմից ընդունվել, ուսումնասիրվել և ամփոփվել են «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված կանոնադրական կապիտալում կատարած ներդրումների համար արտոնությունից օգտվող կազմակերպությունների կողմից տարեկան


հաշվետվություններով ներկայացված փաստաթղթերը: Ընդհանուր առմամբ 2010-2015թթ. շահութահարկի արտոնություն են ստացել թվով 6 կազմակերպություններ, որոնց կանոնադրական կապիտալում կատարված ներդրումներից 3,864.1 միլիոն դրամը գնահատվել է որպես արտադրական նպատակով կատարված ներդրում և տրամադրվել է 386.4 միլիոն դրամի արտոնություն:

Շարունակվել են աշխատանքները պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող աշխատանքների, մատակարարվող ապրանքների առավելագույն գների հաստատման միասնական մոտեցման կիրառման ուղղությամբ:

ԼՂՀ կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշման համաձայն 2015 թվականին ընդունվել է մատուցվող ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ Նախարարության համաձայնությանը ներկայացրած 1 պետական ոչ առևտրային կազմակերպության հայտ: Կատարելով հայտով ներկայացված հաշվարկ-հիմնավորումների ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ թվով 45 ծառայությունների առավելագույն գների կիրառման վերաբերյալ տրվել է համաձայնություն:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ԼՂՀ օրենսդրության համաձայն ԼՂՀ ֆինանսների նախարարության կողմից 2015 թվականի ընթացքում ստացվել, ուսումնասիրվել և տվյալների շտեմարան է մուտքագրվել թվով 80 հաշվետվություն, որոնք բոլորն էլ վերաբերում էին պարտադիր տեղեկացման ենթակա գործարքներին: Ներկայացված հաշվետվությունների բաշխումն ըստ հաշվետու անձանց տեսակների ներկայացված է գծապատկերում:



Գծապատկեր. ներկայացված հաշվետվությունների քանակը՝ ըստ հաշվետու անձանց տեսակների (հատ)

Փաստաթղթաշրջանառություն, իրավաբանական ծառայություն և կադրային ոլորտ

2015 թվականի ընթացքում ԼՂՀ ֆինանսների նախարարությունը ստացել է 7,970 փաստաթուղթ, որից 365-ը՝ քաղաքացիների դիմումներ: Բոլոր ստացված փաստաթղթերը քննարկվել և ընթացքավորվել են, անհրաժեշտության դեպքում տրվել են պատասխաններ:

Հաշվետու ժամանակաշրջանում Նախարարության կողմից ընդհանուր առմամբ մշակվել և ներկայացվել են 249 իրավական ակտերի նախագծեր, այդ թվում.

ԼՂՀ օրենքներ	- 16
ԼՂՀ կառավարության որոշումներ	- 152
ԼՂՀ վարչապետի որոշումներ	- 73
ԼՂՀ ֆինանսների նախարարի հրամաններ	- 8

Ուսումնասիրվել են նախարարություններից ու գերատեսչություններից ներկայացված ԼՂՀ օրենքների, ԼՂՀ կառավարության որոշումների, այլ իրավական ակտերի և ծրագրերի նախագծերը, գնահատվել են դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը ԼՂՀ օրենսդրության պահանջներին, տրվել են համապատասխան եզրակացություններ և առաջարկություններ:

Ուշադրության կենտրոնում մշտապես պահելով բնակչության հետ հետադարձ կապի ապահովումը՝ Նախարարության աշխատողների կողմից իրականացվել են ընդունելություններ ու հանդիպումներ (տարվա ընթացքում՝ ավելի քան հազար

ընդունելություն):

Իրավաբանական անձանց ու քաղաքացիների կողմից բարձրացված խնդիրները լսվել և պարզաբանվել են, ձեռնարկվել են միջոցներ դրանց լուծման ուղղությամբ:

Նախարարության կողմից կատարված աշխատանքների թափանցիկությունը և հրապարակայնությունն ապահովելու նպատակով մամուլում պարբերաբար հրապարակվել են հաղորդագրություններ:

Պարբերաբար իրականացվել են Նախարարության պաշտոնական ինտերնետային կայքէջի (minfin-nkr.am) ընթացիկ տեղեկատվական թարմացման և համալրման աշխատանքները: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն Նախարարության գործունեության հիմնական ոլորտների մասին, հայտարարություններ և վիճակագրական տվյալներ, նորություններ և պաշտոնական հաղորդագրություններ: Կայքէջի միջոցով իրականացվում են նաև գնումների պաշտոնական էլեկտրոնային տեղեկագրի հրապարակման, ինչպես նաև մշակված իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման աշխատանքները:

Կադրային ոլորտում Նախարարության կողմից կատարված աշխատանքներն ուղղված են եղել քաղաքացիական ծառայության մասին և հարկային ծառայության մասին ԼՂՀ օրենսդրության պահանջների ապահովմանը, աշխատակազմի մասնագետների գիտելիքների և փորձի բարձրացմանը:

Քաղաքացիական ծառայության մասին ԼՂՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվետու տարում կազմակերպվել է քաղաքացիական ծառայության գլխավոր և առաջատար պաշտոններ զբաղեցնելու համար 10 մրցույթ, անցկացվել է անձնակազմի 18 վերապատրաստում և 23 ատեստավորում:

«Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքին համապատասխան՝ տարվա ընթացքում անց է կացվել նաև 10 ծառայողի ատեստավորում, որոնցից 6-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոնին, իսկ 4-ը ենթակա են վերապատրաստման: Կազմակերպվել է 1 բաց մրցույթ, որին մասնակցած 26 դիմորդներից 5-ն ընդունվել են աշխատանքի հարկային մարմնում:

Տարվա ընթացքում թվով 92 հարկային ծառայողներ ստացել են հատուկ և դասային կոչումներ:

Փորձի փոխանակման նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության հետ համատեղ կազմակերպվել են մասնագետների փոխադարձ այցելություններ: